«իշխանները և ազնիւները» ազգիս, Կաֆայի մէջ հաստատել են բնակութիւն, մայրաքաղաք անուանելով զնա, իսկ մնացեալ հասարակ ժողովուրդը և գիւղացիք սփռուել են մինչև ցՂարապազար ցՍուրղաթ և Կազարաթ, և մեծ բազմութեամբ ի Սոլդայա Գենուացւոց (Սուղդա), սակաւ յԵւպատորիա, յՕր և այլն։ Հայաբնակ գիւղերուն մեծ մասը Կաֆայի մերձաւոր տեղուանք եղած են, ինչպէս Կէպք-Թէփէ, Սուլթան-Սալա, Նախիջևան (այժմ Գռնինիչքա), Օրթալան. Թօփլու, Ղշլաւ, Սովուք-Սու և այլն։

Հայամաւուրաց ցցուցած ճանապարհին վերայ, ուր Հայք խիտ բնակութիւն հաստատել են, մինչև ցայսօր ամենածախ ժամանակին ձեռքէն մազապուր, կը գտնուին տակաւին, երբեմն զթերակըզիս բազմամարդող և շէնցնող Հայոց հետքերը. զի յընթացս 550 տարեաց սուր և կոտորած և ապաստի ևս այլ հեռաւոր աշխարհք խմբովին գաղթականութիւն ազգիս, մեծապէս տկարացուցել հայութիւնը Ղրիմու մէջ, այլ չեն կարողացած իսպառ բնաջինջ կորուսանել։

Ամենուրեք հայ եկեղեցեաց տիրագին աւերակք, ցիր ու ցան հայ յիշատակարանք, պատերու մէջ, սանդուխներու վերայ, աղբիւրներու ճակատ. ցայսօր Թէոդոսիոյ որ կողմը մարդ փորէ, անշուշտ երկրիս խորէն դուրս կը հանէ հայկական խաչքար մի, ազգային յիշատակարանով։

Բաց ի բազմաթիւ եկեղեցիներէ, բերդերէ և պարիսպներէ, հայախօս յիշատակարաններով, ազգայինք մասնաւոր ջանք արել են անջրդին Կաֆայի մէջ լեռներէն ագուգայներով քաղցրահամ ջրեր իջցընելու, դրոշմելով աղբիւրներուն ճակատը, շի-